

Ճիւղերուն վրայէն կը բումին . աս ծաղկըները խոշոր ու ազուր են , ներսուանց Ճերմակ , իսկ զրսուանց դեղին կանաչ , և ողկուզաձեւ կը կախուին , բայց ամենսեին հոտ չունին . մայիս ամսուն մէջ կը բացուին : Պատուզը եօթը ութը բթաշափի երկայն է . իսկ հաստութիւնը Ճկոյթ մատի չափ է քիչ մը ծուռ աղեղնաձեւ . կակուղ միս մը ունի ու քանի որ հասուննայ՝ կը սեւնայ , ու ետքը երկու կը Ճղքուի . մէջն ալ խել մը մանր մանր կուտեր կան սե ու անհոտ : Եմէն մէկ բոյսը յիսունի չափ պտուղ կը բերէ :

Խնճնիրենը որչափ որ պարզ բոյս մը կ'երենայ վանիլիան , այնչափ ալ աւելի անտառներուն զարդ կ'ըլլայ . վասն զի ծառերուն մերկ բուներուն վրայ պըլլուելով՝ ան ծառերը մէկմէկու հետ կը կապէ : Եշրոր իրեն յարմար հող գտնէ , առանց մասնաւոր խնամքի կարօտ ըլլալու առաջ կուգայ . բայց պտուղը պահելու համար շատ հոգ պէտք է : Խուխնէացիք տասուերկուքական պըտուղ կ'առնեն ու կոթին կողմէն դերձանի մը վրայ կ'անցընեն , յետոյ ջուրը եփ կը հանեն ու զանոնք մէջը կը խոթեն որ շուտ մը կը Ճերմըկին . յետոյ կը հանեն՝ դերձանին երկու ծայրէն կը կախեն քանի մը ժամ արեւուն մէջ : Եշրկորդ օրը փետուրով մը վրան եղ կը քսեն որ կամաց կամաց չորնայ , չսենայ ու միշտ կակուղ մնայ . և որպէս զի պտուղը երկու չրամբնուի՝ եղի մէջ թաթիսած բամբակով կը պատեն : Վանի որ չորցընելու համար կը թողուն , պտղին ծայրէն կալչուն ու առատ հիւթ մը կը վազէ . երբոր բոլոր կը վազէ աս խժային հիւթը , պտղին ձեւը կը փոխուի կը բարակնայ , կը սենայ , ու կակութիւնը պահելով կը չորնայ . ան ատեն կ'առնեն ապիկած ամանի մէջ կը գնեն որ թարմ մնայ . երբեմն երբեմն կը բանան ու կը նային որ եղը խիստ շատ ըլլայ , որպէս զի աղէկ հոտը չկորսուի :

( Եախելու վանիլիային աղէկ տեսակը մութ կարմիր կ'ըլլայ , առածգական

և մնութ ու հոտը քիչ . ամանը բանալու որ ըլլաս՝ սե թանձը ու խժային հիւթով մը լեցուած կ'ըլլայ . ան հեղանիւթին վրայ ալ ամենամանը սե հունտերով ծածկած կ'ըլլայ , անսանկ սաստիկ ու անոյշ հոտ մը ունի որ մարդս անով կը գինովնայ :

Ա անիլիան շատ տեսակ բաներու մէջ կը գործածուի , ինչպէս շաքարեղիններու ու գեղերու մէջ . աւելի օգտակար է տկար ստամոքս ունեցողներուն ու որոնց որ արեան շրջանը դանդաղ է . ըսել է թէ ջղոտ ուժով ու տաքարիւն պատանիները պէտք չէ գործածեն :

Ա ուրբ Դասմինիկոս կղզւոյն մէջ , Վայեննայի , Վարաքի ու Լարթագինէի ծովեղերքը ու Փանամայի պարանոցը շատ կը գտնուի . զարմանք է որ նոյն տեսակ երկիրներ գաղթական գրնացողները վանիլիայի բոյսը չեն մշակեր նաև իրենց երկրին մէջ , թէպէտ և խիստ քիչ հոգ կ'ուզէ . Ճիւղ մը որ տաշտաթաղ ընելով տնկես , երրորդ տարուընէն կը սկսի պտուղ տապէ ինչուանքառասուն տարի :

ԵՇԻՆԴԱԿԱՆ ՍՐ ԱՌԱՆՔԱՆԵՒՄ + ՈՒ ՀԵՆ Ի ՎԵՐԱ ԱՌԱՐԴԻ :

ԽՄԱՍՑՈՒ ԱՌԱՆԳ ԳՈՐԾՈՅ .

ԱՎԱՐ ԱՌԱՆԳ ԿԱՐԳԻ .

ԵՐԻՄԱՍԱՐԳ ԱՌԱՆԳ ՀՆԱՋԱՆԴՈՒԹԵԱՆ .

ՏՕՂՎԱԹՎՈՐՆ ԱՌԱՆԳ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ .

ԿԻՆ ԱՌԱՆԳ ՊԳՈՒԾՈՒԹԵԱՆ .

ԽՆԱՆ ԱՌԱՆԳ ԱՌԱՎԲԻՆՈՒԹԵԱՆ .

ՔՐԻՄԱՌՈՆԵԱՅ ԿՌՈՒԾՈՂ .

ԱՎՔԱՄԻՆ՝ ՀԱՎԱՐԱ .

ԱՎՔԱՅՆ ԱՆԻՐԱՎ .

ԵՎԻԽՈՎՈՎՈՍ ՈԳՔԻ .

ԺՈՂՈՎԱՐԳԴՆ ԱՆԻՐԱՎ .

ԵՎ ՎԵՐՑՈՒՆ , ԱՋՇ մի ԱՌԱՆԳ ՊԱՄՊԱՄԻ :